ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

**11.05.2026 թ. կնքված N ԵՔ-ԳՀԱՇՁԲ-26/59-4 գնման պայմանագրի**

ք. Երևան «07» « 07 » 2026թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետ Վ.Պապիկյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 14.11.2018 թվականի թիվ 3407-Ա որոշման հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու)), մի կողմից, և «ԹՈՐԳ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Թ. Սիոյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կապալառու), մյուս կողմից, երկուսը միասին՝ (այսուհետև՝ Կողմեր), ղեկավարվելով Գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ և հիմք ընդունելով 11.05.2026 թ. կնքված N ԵՔ-ԳՀԱՇՁԲ-26/59-4 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.6 կետը և Երևանի քաղաքի **Նոր Նորք** վարչական շրջանի կողմից ներկայացված գրությունը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

**1. Համաձայնագրի առարկան**

Հետագա համագործակցության նպատակով կողմերը որոշեցին՝

1.1 Պայմանագրի՝ **Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի բակային տարածքների բարեկարգման և հիմնանորոգման աշխատանքների** ժամկետը երկարաձգել մեկ անգամ 30 օրացուցային օրով:

**2. Այլ պայմաններ**

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով ստանձնած Կողմերի իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

***3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները***

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՊԱԼԱՌՈՒ |
|---|---|
| Երևանի քաղաքապետարան | «ԹՈՐԳ» ՍՊԸ |
| ք. Երևան, Արգիշտիի փ. 1 | ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ. Լանջաղբյուր, |
| ՀՀ ֆինանսների նախարարության | Մաշտոցի փ. 6 տուն |
| գործառնական վարչություն | «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ |
| ՀՀ 900032098528 | ՀՀ 220083336135000 |
| ՀՎՀՀ 02593108 | ՀՎՀՀ 08418358 |
| Վ.Պապիկյան ______ | Թ. Սիոյան ______ |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ. | Կ.Տ. |